

ISSN 1829-4987

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ 5-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ
Գիտաժողովի կյութեր

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ECONOMICS AND MANAGEMENT
CURRENT ECONOMIC PROBLEMS
5TH INTERNATIONAL CONFERENCE OF
STUDENTS, POSTGRADUATES AND YOUNG SCIENTISTS
Proceedings

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ЭКОНОМИКИ И УПРАВЛЕНИЯ
СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИКИ
5-ая МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ
СТУДЕНТОВ, АСПИРАНТОВ И МОЛОДЫХ УЧЕНЫХ
труды конференции

ԵՊՀ ԵԳՄ – YSU UYS – OMY EGY
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН

2017

**Հրատարակվում է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի Գիտական խորհրդի երաշխավորությամբ**

**Published by the recommendation of the Academic Council
of the Faculty of Economics and Management of YSU**

**Рекомендовано к печати Ученым советом
факультета Экономики и управления ЕГУ**

Խմբագրական խորհուրդ

տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ. Սարգսյան** (նախագահ), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Գ.Ա. Ղարիբյան**,
տ.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Առաքելյան**, տ.գ.դ., պրոֆ. **Ս.Լ. Ղանթարջյան**, տ.գ.դ., պրոֆ. **Մ.Վ.
Միքայելյան**, տ.գ.դ., պրոֆ. **Թ.Շ. Թորոսյան**, տ.գ.դ. **Յ.Գ. Սևազականյան**, տ.գ.դ., պրոֆ.
Վ.Բ. Բոստանյան, տ.գ.թ., դոց. **Գ.Ս. Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Վ.Գ. Խաչատրյան**

Editorial board

Doctor of Economics, Professor **H.L. Sargsyan** (Chairman), Corresponding Member of National Academy of Sciences of RA **G.A. Gharibyan**, Doctor of Technical Sciences, Professor **A.H. Arakelyan**, Doctor of Economics, Professor **S.L. Khantaryan**, Doctor of Economics, Professor **M.V. Mikayelyan**, Doctor of Economics, Professor **T.Sh. Torosyan**, Doctor of Economics **H.G. Mnatsakanyan**, Doctor of Economics, Professor **V.B. Bostanjyan**, PhD in Economics, Associate Prof. **G.S. Galstyan**, PhD in Economics, Associate Prof. **K.G. Khachatryan**

Редакционная коллегия

դ.է.ն., պրոֆ. **Գ.Լ. Սարգսյան** (председатель), член кор. НАН РА **Գ.Ա. Գարիբյան**, д.т.н., проф. **Ա.Ա. Արաքելյան**, д.է.ն., проф. **Ս.Լ. Կանտարձյան**, д.է.ն., проф. **Մ.Վ. Միքաելյան**, д.է.ն., проф. **Թ.Շ. Թորոսյան**, д.է.ն. **Ա.Գ. Մնացականյան**, д.է.ն., проф. **Վ.Բ. Բոստանջյան**, д.է.ն., к.է.ն., доц. **Գ.Ս. Գալստյան**, к.է.ն., доц. **Վ.Գ. Խաչատրյան**

Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 5-րդ գիտաժողովի կյուրթեր – Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2017 - 288 էջ:

Ժողովածուում ներառված են ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագիրը կրող միջազգային գիտաժողովի կյուրթերը:

The collection includes proceedings of the international scientific conference of students, postgraduates and young scientists “Current economic problems”.

В сборнике включены труды международной научной конференции студентов, аспирантов и молодых ученых “Современные проблемы экономики”.

**ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՁԵՎԱ-
ՎՈՐՄԱՆ ՎՐԱ ԱՁԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Միրզոյան Նարինե

*ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետ, տ.գ.թ. ասիստենտ*
Էլ. Հասցե՝ narine_mirzoyan@inbox.ru

ՀՀ-ում, ինչպես բոլոր զարգացող երկրներում, տնտեսության զարգացման հիմնական նախադրյալներից մեկը ֆինանսական կայունությունն է, որի գլխավոր երաշխիքներից է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների բնականոն և արդյունավետ գործունեությունը: Վերոնշյալից հետևում է, որ առևտրային բանկերի ֆինանսական կայունությունը ՀՀ տնտեսության առանցքային խնդիրներից է: Բանկային համակարգի կայունության և վերջինում առկա ռիսկերի բացահայտման և նվազեցման խնդիրները մշտապես գտնվում են նաև Բազելյան կոմիտեի ուշադրության կենտրոնում, ինչի վառ ապացույցն է Բազել II-ում⁵ գերակշռող առևտրային բանկերի կայունությանն ուղղված պահանջները: Բանկային համակարգի կայունությանն են ուղղված նաև ՀՀ ԿԲ առևտրային բանկերի կապիտալի համարժեքությանը վերաբերող նորմատիվները⁶, «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգը»⁷ և այլն: Այնուամենայնիվ, չնայած առևտրային բանկերի կայունությունն ապահովելու վերը նշված համատեղ միջոցառումների իրականացմանը, ՀՀ առևտրային բանկերի չաշխատող ակտիվների կշիռը 2016 թ.-ի ընթացքում հիմնականում աճման միտում է ունեցել⁸: ՀՀ ԿԲ տվյալների համաձայն առևտրային բանկերի չաշխատող ակտիվներն առավել մեծ տեսակարար կշիռ ունեն սպառողական

⁵ **Вяткин В. Н., Гамза В. А.**, Базельский процесс, Базел II – управление банковскими рисками. Москва, 2007, 41-42 с. International Convergence of Capital Measurement and Capital Standards, 2005.

⁶ Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական նորմատիվներ, կանոնակարգ 2, ՀՀ ԿԲ, 2007, էջ 3:

⁷ www.cba.am, կանոնակարգեր:

⁸ ՀՀ ԿԲ, վարկային ներդրումներ, առևտրային բանկերում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների՝ www.cba.am

վարկերում: Վերոնշյալի վրա շատ գործոններ են ազդում, բայց առավել ազդեցիկները հետևյալն են.

- առևտրային բանկերի կողմից ներքին վարկանիշի շնորհման միջոցով վարկառուների վարկունակության համալիր գնահատման մոդելներում առկա թերությունները,
- վարկառուների սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը, պայմանավորված ՀՀ-ում առկա խնդիրներով,
- վարկառուների կողմից առևտրային բանկերից ներգրավվող վարկային ռեսուրսների բարձր տոկոսադրույթները և այլն:

Առևտրային բանկի կողմից պոտենցիալ վարկառուներին շնորհվող վարկանիշից պետք է կախված լինեն վերջինիս վարկավորման պայմանները: Պոտենցիալ վարկառուների վարկունակության գնահատման մոդելներում առկա թերությունները հանգեցնում են վերջինիս հանդեպ կիրառվող վարկային պայմանների (վարկային ռեսուրսի սահմանաչափի և տոկոսադրույթի) սխալ սահմանման: Իսկ վարկառուների կողմից վարկային ռեսուրսների ներգրավման բարձր տոկոսադրույթները, մեծամասամբ վերջիններիս անկայուն սոցիալ-տնտեսական վիճակը հաշվի առնելով, ավելի են նպաստում չաշխատող ակտիվների տեսակարար կշռի ավելացմանը:

Վարկային ռեսուրսի տոկոսադրույթի օպտիմալ և արդյունավետ մեծության որոշումը առևտրային բանկի և վարկային կազմակերպության կարևորագույն խնդիրներից մեկն է:

Ներկայացվող հոդվածի նպատակը ներգրավվող վարկային ռեսուրսի ձևավորված տոկոսադրույթի բաղադրիչների վերլուծությունն է, ինչպես նաև կիսավող տոկոսադրույթի և վարկառուի վարկանիշի միջև կապի բացահայտումը:

ՀՀ-ում, ինչպես և ամբողջ աշխարհում, յուրաքանչյուր առևտրային բանկ ունի իր կողմից առաջարկվող վարկային պրոդուկտների (սպառողական վարկ, հիփոթեք և այլն) տեսականին⁹: Առևտրային բանկերի կողմից առաջարկվող վարկային պրոդուկտների տեսակները և քանակը կախված են մի շարք գործոններից՝ առևտրային բանկերի ուղղվածությունից (մասնագիտացումից՝ ունիվերսալ, գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական, ապրանքների ապառիկ գնման և այլն), վերջիններիս մեծությունից և այլն: Առևտրային բանկերից յուրաքանչյուրը միևնույն տեսակի

⁹ www.banks.am

վարկային պրոդյուկտի համար կարող է սահմանել տարբեր տոկոսադրույթներ, վերոնշյալն, ինչպես առևտրային բանկի վերը քննարկված առաջնային ուղղվածության, այնպես էլ վերջինիս ռիսկ-ախորժակի հետևանք է:

Առևտրային բանկերի կողմից պոտենցիալ վարկառուների անվճարունակության ռիսկի համալիր գնահատման հիման վրա շնորհված ներքին վարկանիշից է կախված վերջինիս կողմից տրամադրվող վարկային ռեսուրսի տոկոսադրույթը, որը պետք է հավասար լինի՝

$$S_{\text{վո}} = S_{\text{բ}} + S_{\text{շ}} + S_{\text{ռ-վ}} \quad (1)$$

որտեղ՝


S_{վո} - վարկային ռեսուրսի տոկոսադրույթ,

S_բ - բազային տոկոսադրույթ,

S_շ - շահույթի տոկոսադրույթ,

S_{ռ-վ} - ռիսկի վճարի տոկոսադրույթ (հավելյալ տոկոսադրույթ):

Բազային տոկոսադրույթը՝ վերաֆինանսավորման տոկոսադրույթը, այն տոկոսադրույթն է, որով առևտրային բանկերն անհրաժեշտության դեպքում ներգրավում են վարկային ռեսուրսներ իրենց երկրի ԿԲ-երից: ՀՀ-ում բազային տոկոսադրույթը սահմանվում է ՀՀ ԿԲ կողմից՝ դրամավարկային քաղաքականության իրականացման շրջանակներում: ՀՀ ԿԲ բազային տոկոսադրույթը վերանայվում է մոտավորապես մեկուկես ամիսը մեկ անգամ: Վերջին մեկուկես տարվա ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույթն ունի կայուն նվազման միտում (գծապատկեր 1):



Գծապատկեր 1.

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի կայուն նվազումը պայմանավորված է մի շարք գործոններով: Այն դեպքում, երբ գնաճի ցուցանիշը ցածր է, ֆինանսական շուկայում ցածր տոկոսադրույքով դրամական միջոցները կարող են խթանել տնտեսության վարկավորումը և հանգեցնել գործարար աշխուժության, միևնույն ժամանակ վերջինս կխթանի գնողունակ պահանջարկը՝ առանց գնաճի բարձր տոկոսի: Վերջին շրջանում ՀՀ-ում գնաճի տոկոսը ՀՀ ԿԲ նպատակային ցուցանիշից ցածր էր, ինչով էլ պայմանավորված էր վերաֆինանսավորման տոկոսադրույքի կայուն նվազումը:

Համեմատության համար նշենք, որ ՌԴ-ում մինչև 2015 թվականի դեկտեմբերի վերջ վերաֆինանսավորման տոկոսադրույքը 8.25 տոկոս էր, իսկ 2016 թ.-ի հունիսին այն դարձավ 10.5 տոկոս, ինչը պայմանավորված էր նաև ՌԴ-ի հանդեպ կիրառվող պատժամիջոցների արդյունքում ստեղծված բարձր գնաճային միջավայրով: 2017թ.-ին ՌԴ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սկսեց նվազել՝ այժմ կազմելով 9.25 տոկոս:

Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում բազային տոկոսադրույքը նվազել է 3.75 տոկոսով: Այսինքն՝ այլ հավասար պայմաններում, եթե բանաձև (1) - ի մացած բաղադրիչները մնային հաստատուն, ապա առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկային ռեսուրսների տոկոսադրույքները պետք է նվազեին 3.75 նիշով:

Շահույթի տոկոսադրույքը կախված է մի շարք գործոններից՝ առևտրային բանկի հեղինակությունից, վստահելիությունից, տրամադրվող բանկային ծառայությունների որակից ու տեսականուց, մրցունակությունից և այլն: Վերոնշյալների մակարդակից են կախված առևտրային բանկում ձևավորվող գործառնական ծախսերը, որոնք և կոմիսիոն վճարների հետ միագումար, մեծ հաշվով, ձևավորում են շահույթի տոկոսադրույքը:

Բազային և շահույթի տոկոսադրույքներն, ընդհանուր առմամբ, լինում են հավասար բոլոր վարկառուների համար, իսկ հավելյալ տոկոսադրույքի մեծությունն ուղղակիորեն կախված է վարկառուին շնորհված ներքին վարկանիշից: Առևտրային բանկի կամ վարկային կազմակերպության կողմից հաշվարկված ռիսկի վճարը մեծանում է վարկանիշի իջեցմանը զուգընթաց և հակառակը: Օրինակ՝ եթե շնորհվող առավելագույն վարկանիշը AAA է, ապա ռիսկի վճարը կարող է լինել 0%, իսկ միջին վարկանիշինը՝ BB-ինը՝ [0,5%-1%], և այլն:

Վերը քննարկվածի շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև առևտրային բանկի կամ վարկային կազմակերպության «ռիսկի ախորժակ» (որի հակառակ կողմը հանդիսանում է ռիսկից խուսափելը) հասկացությանը: Վերջինս իրենից ներկայացնում է որոշակի եկամուտ ստանալու նպատակով որոշակի մակարդակի ռիսկ ստանձնելու ցանկություն: Այլ կերպ ասած՝ «ռիսկի ախորժակ»-ը իրենից ներկայացնում է ռիսկերի կառավարման ընթացքում ուշադրության կենտրոնացման տեղափոխություն կորուստների նվազեցման հարթությունից դեպի եկամտաբերություն/ռիսկ հարաբերության օպտիմիզացիայի հարթություն: Ֆինանսական հաստատություններին անհրաժեշտ է սահմանել իրենց «ռիսկի ախորժակը» կապված տարբեր տեսակի և մակարդակների ռիսկերի ստանձման հետ՝ հաշվի առնելով այդպիսի ռիսկերի կառավարման իրենց կազմակերպչական ունակությունը: Այդպես, օրինակ՝ որոշակի վարկանիշից ցածր վարկանիշի դեպքում վարկառուին մերժել համագործակցության մեջ: Սակայն, եթե առևտրային բանկը կամ վարկային կազմակերպությունը ունեն ռիսկի բարձր ախորժակ, ապա վերջիններս նույնիսկ վերոնշյալ վարկանիշերն ունեցող վարկառուներին կդիտարկեն որպես գործընկերներ:

Միզոյան Նարինե

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿՐԱ ԱՃՂՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

***Բանալի բառեր** - ֆինանսական կայունություն, վարկունակության գնահատում, վարկային ռեսուրս, ներքին վարկանիշ, վերաֆինանսավորման տոկոսադրույթ, ռիսկի վճար, ռիսկ-ախորժակ:*

Ներկայացվող հոդվածի նպատակը վարկային ռեսուրսի ձևավորված տոկոսադրույթի բաղադրիչների վերլուծությունն է, ինչպես նաև կիսառվող տոկոսադրույթի և վարկառուի վարկանիշի միջև կապի բացահայտումը:

Առևտրային բանկերի կողմից պոտենցիալ վարկառուներին տրամադրվող վարկային ռեսուրսի տոկոսադրույթը պետք է հավասար լինի բազային՝ վերաֆինանսավորման տոկոսադրույթի, շահույթի տոկոսադրույթի և ռիսկի վճարի տոկոսադրույթի գումարին: Որտեղ ռիսկի վճարի տոկոսադրույթի մեծությունը ուղղակիորեն պետք է կախված լինի վարկառուին առևտրային բանկի կողմից շնորհված ներքին վարկանիշից: Առևտրային բանկի կամ վարկային կազմակերպության կողմից հաշվարկված ռիսկի վճարը պետք է մեծանա վարկանիշի իջեցմանը զուգընթաց և հակառակը:

Mirzoyan Narine

PECULIARITIES OF THE ANALYSIS OF THE FACTORS AFFECTING THE FORMATION OF INTEREST RATES ON CREDIT RESOURCES IN THE REPUBLIC OF ARMENIA

***Key words** - financial stability, creditworthiness assessment, credit resource, internal rating, refinance rate, risk charge.*

The present article is devoted to the analysis of the established interest rate components of credit resource, as well as to the revelation of the connection between the applied interest rate and the rating of the borrower.

The interest rate of the credit resource provided to potential borrowers by commercial banks must be equal to the sum of the refinance rate, the profit rate and the interest rate of risk charge. The size of the risk charge interest rate should depend directly on the internal rating assigned to the borrower by the commercial bank. The risk charge calculated by a commercial bank or a credit company should increase in parallel with the decrease in rating and vice versa.

Мирзоян Нарине

ОСОБЕННОСТИ АНАЛИЗА ФАКТОРОВ ВЛИЯЮЩИХ НА ПРОЦЕНТНУЮ СТАВКУ КРЕДИТНЫХ РЕСУРСОВ В РА

***Ключевые слова** - финансовая стабильность, оценка кредитоспособности, кредитные ресурсы, внутренний рейтинг, ставка рефинансирования, оплата риска, риск-аппетит.*

Цель данной статьи анализ отдельных элементов влияющих на процентную ставку кредитных ресурсов, а также выявление связи между применимой процентной ставкой и внутренним рейтингом заемщика.

Процентная ставка кредитных ресурсов, предоставляемых коммерческими банками потенциальным заемщикам, должна быть равна сумме базовой процентной ставки, процентной ставки прибыли и процентной ставки платы за риск. Величина процентной ставки платы за риск должна напрямую зависеть от присвоенного коммерческим банком внутреннего рейтинга заемщику. Вычисленная коммерческим банком или кредитной организацией плата за риск должна увеличиваться параллельно снижению рейтинга заемщика и наоборот.